



Վ. ԲԻՈՏԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ



Եփական պետականությունից զրկված ու օտարների լծի տակ հեծող Հայաստանում անցյալներում չկային և չէին էլ կարող լինել այնպիսի թանգարաններ, ուր հնարավոր լինի դարերի ընթացքում ի մի ժողովել հայ նյութական կուլտուրայի արժեքները: Եթե դրան ավելացնենք Հայաստանում նյութական կուլտուրայի արժեքների հավաքածոներ կազմելու տրադիցիայի բացակայությունն անցյալներում, ապա պարզ կլինեն թանգարանների չգոյության պատճառները:

Մյուս կողմից մենք տեսնում ենք, որ եթե Հայաստանում բացակայել է թանգարանային հավաքածոների կազմելու տրադիցիան, ապա դրան հակառակ, մեր նախնիքը հին դարերից սկսած սովորություն են ունեցել ձեռագրական հավաքածոներ կազմելու: Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում ու նրա սահմաններից դուրս գտնվող հայաբնակ վայրերում անգամ մեծ եռանդով հավաքվել ու պահպանվել են բազմաթիվ ձեռագրեր: Ձեռագրերի ժողովման ու պահպանման կենտրոններ են հանդիսացել հատկապես վանքերը, մենաստաններն ու եկեղեցիները:

Այստեղ, սակայն, պետք է նշել, հայ ժողովրդի մոտ գոյություն ունեցող մի այլ չափազանց կարևոր, տրադիցիայի առկայությունը, որին ենք պարտական մեր անցյալի նյութական կուլտուրայի մնացորդների պահպանման համար: Հայ ժողովուրդը, ճիշտ է թանգարանային հավաքածոներ չի կազմել, բայց նյութական կուլտուրայի արժեքներով հարուստ վայրերը բնական թանգարանների վերածելով, ամենայն հոգատարությամբ ու գորգությանքով պահպանել, փրկել է նրանք ոչնչացումից: Հնագույն բերդերի, քաղաքների, վանքերի ավերակները,

արձանագրությունների բեկորները, դամբարանները պահպանվել են երկյուղածությամբ: Եվ եթե այսօր մեր ձեռքն են հասել բազմաթիվ հնագույն սեպագիր ու այլ բազմապիսի արձանագրություններ, ճարտարապետական արվեստի նմուշներ, դրամներ, դարդարանքի ու այլ շատ իրեր, դա շնորհիվ հնությունները սրբությամբ ու երկյուղածությամբ պահպանելու հայ ժողովրդի անգնահատելի սովորության:

Թանգարանային պատմությունը մեզ մոտ կապված է հոգևոր կենտրոնների հետ. դա բացատրվում է նրանով, որ պետականագույր հայ ժողովուրդն այսպես թե այնպես համախմբված է եղել այդ կենտրոնների շուրջը:

Բացի հոգևոր կենտրոններից նյութական կուլտուրայի շատ արժեքներ պահպանվել են նաև անհատների մոտ, սեփական տան թաղամասներում, պահարաններում ու սրնգուկներում: Այդ թանկարժեք իրերի մասը ու թեթև տեսակները հայ մարդու հետ թափառել են երկրե-երկիր, դարերի ընթացքում անցել սերնդից-սերնդի: Ներկայումս, երբ մենք քառորդ դարից ավելի է ինչ սեփական պետականություն ունենք, այդ կարգի թանկարժեք իրերը հավաքում ենք զրեման կամ նվիրատվության միջոցով: Այսպիսով դարերի բովից անցած այդ իրերը դանդաղորեն հոսում են դեպի ՀՍՍՌ Պետական պատմական թանգարանը:

Մեր նյութական կուլտուրայի բազմաթիվ արժեքներ արտահոսել են նաև երկրից դուրս, ընկնելով օտար թանգարաններ. այսպես օրինակ Անահիտի ոսկեծույլ զլուխը տարվել է Լոնդոն: Այդ արտահոսմանը մեծ չափով նպաստել են եվրոպացի ուղևորները, միսիոնարները և իրենց սեփական շահերը ամենից վեր դասող հայ ու օտար վաճառականները, որոնք եվրոպական թանգարան-

ներին են վաճառել մեր ազգային արժեքների մի մասը:

19-րդ դարում հրապարակի վրա են դրվում Հայաստանի պատմական ու ազգագրական արժեքների ուսումնասիրության հարցերը: Պոլսում, Վենետիկում, Ջմյուռնիայում լույս տեսնող թերթերն սկսում են տպագրել տպավորություններ, ուղեգրական նոթեր և այլն: Ինչ որ արժեքավոր է, աչն պահելու, մեր «ուսումնասիրող հնագիտաց» ուշադրությունը հանձնելու ձգտումներ են խմբում: 50—60-ական թվականներին խնդիր է ծագում հայ կուլտուրայի օջախները օտար քաղաքներից բուն երկիրը տեղափոխելու: Վասպուրականի արժիվ Մկրտիչ Խրիմյանը Պոլսից Վան—Վարդգ տեղափոխվելով, առաջինը Արևմտահայաստանում, հիմնում է դպրոց, տպարան ու թանգարան:

Շնորհիվ ուսանական տիրապետության դրությունն ավելի բարվոք էր Արևելահայաստանում. էջմիածնում գոյություն ուներ թանգարան, որ պահվում էին եկեղեցական իրեր: Էականն այստեղ այն չէ, թե ինչն էր կազմում այդ թանգարանի բովանդակությունը, այլ թանգարան կազմակերպելու հասկացողությունը: Այդպիսի թանգարան ուներ նաև Գալիսեի վանքը, որը կազմակերպվել էր Ս. Ամատունու ջանքերով: Մեծ հետաքրքրություն էր ներկայացնում «Հայրիկի թանգարանը», որը հիմնադրվել էր Խրիմյան Հայրիկի կողմից՝ նրա Արևելահայաստան տեղափոխվելուց հետո: Այս թանգարանի նյութերը, անշուշտ, նախորդ ժամանակի հավաքածոներ էին, սակայն Խրիմյանի կողմից նրանք օգտագործվում են որոշ սիստեմի վերածված թանգարանի կազմակերպման համար:

Էջմիածնի այս թանգարանը առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հարստանում է ազգագրական նոր հավաքածոներով, որ ժողովում էին Արևմտահայաստանից Արևելահայաստան ներգաղթած հայ ժողովրդի հատվածներից: Սակայն բացակայում էր այդ նոր նմուշների կանոնավոր հաշվառումը:

Թանգարան գոյություն ուներ նաև Մոսկվայի լազարյան ճեմարանին կից:

Արևելահայերի համար կուլտուրական օջախ էր հանդիսանում Թիֆլիսը. 19-րդ դարի 70—80-ական թվականներին այստեղ կազմակերպված Կովկասյան թանգարանում էին կենտրոնացված նաև հայ նյութական կուլտուրայի արժեքները:

Թանգարան էր կազմակերպվել նաև Նորնախիջևեանում:

Նշանակալից երևույթ էր հանդիսանում Ա. Մառի կազմակերպած թանգարանն Անիում (1904 թ.), որ հավաքված էին Անիի պեղումների ընթացքում հայտնաբերված իրերը: Այս թանգարանը կոչվում էր «Անվո հնագարան»:

Սակայն, պիտի ասել, որ այս թանգարանները վարդաքման ու ընդարձակման հետևանքները չունեին, քանի որ պեղումներից ստացվող թանգարժեք իրերը մեծ մասամբ տեղափոխվում էին Կովոնյական մայրաքաղաքների թանգարանները:

Թանգարանների կազմակերպման գործը կանոնավոր հիմքերի վրա է դրվում միայն սովետական կարգեր հաստատվելուց հետո:

1921 թվի օգոստոսի 20-ին Երևանում հիմնադրվում է «Գեղարվեստական թանգարանը», որի ղեկավար է նշանակվում ժողովրդական նկարիչ Մարտիրոս Ուրայանը: Վերջինս ջանք չի խնայում նորաբաց թանգարանում կենտրոնացնելու բազմաթիվ արժեքավոր նկարներ ու թանգարանային իրեր: Այդ օրերին նշանավոր ազգագրագետ Երվանդ Լալայանը Թիֆլիսից Երևան է տեղափոխում «Կովկասի Ազգագրական Ընկերության» պատկանող արժեքները ու միացնում դրանք նորաստեղծ թանգարանին: 1922 թվին Մոսկվայից Երևան է տեղափոխվում պատերազմի տարիներին այնտեղ պահվող թանգարանային գույքը, որը հետագայում տրվում է 1922 թվի վերջում կազմակերպված «Պետական կենտրոնական թանգարան»-ին: Այդ նույն թվականին բանառեր Երվանդ Շահադիզի միջոցով Երևան է տեղափոխվում նոր Նախիջևանի թանգարանը, որը նույնպես միացվում է Պետական կենտրոնական թանգարանին: Այդ ժամանակ Պետական կենտրոնական թանգարանն ուներ չորս հիմնական բաժիններ. — գեղարվեստական, ազգագրական, հնագիտական և պատմագրական: Այս թանգարանը գտնվում էր Լուսժողկոմատի իրավասության տակ և ղեկավարվում էր Խորհրդի միջոցով: Թանգարանի ընդհանուր վարիչ է նշանակվում Երվանդ Լալայանը:

1926 թվին Պետական կենտրոնական թանգարանին միացվում է Դաւթաճկական արշավանքների ժամանակ Սանահին տեղափոխված, Անիի թանգարանը:

1929 թվին Պետական կենտրոնական թանգարանին է միացվում Էջմիածնի թանգարանը: Այդ նույն թվականին Պետական կենտրոնական թանգարանին են հանձնվում նմանապես Լուսժողկոմատի, Հոգժողկոմատի ու Պարենավորման ժողկոմատի տրամա-

դրույթյան տակ եղած թանգարանային բեր-
նույթի իրերը: Բացի այդ, գեղարվեստական
բաժնի համար Մոսկվայի ու Լենինգրադի
թանգարաններից ստացվում են ուսումնական
ու եվրոպական նշանավոր նկարիչների ու
քանդակագործների մի շարք ստեղծագոր-
ծությունները:

1930 թվին թանգարանում կազմակերպ-
վում է նաև ճարտարապետական բաժին, որի
աշխատանքները գլխավորում էր մեծ ճար-
տարապետ Թորոս Թորամանյանը:

Սրանով բոլորվում է Պետական կենտրո-
նական թանգարանի կազմավորման առա-
ջին էտապը:


Թանգարանի գործունեության երկրորդ
էտապն սկսվում է 1931 թվից, երբ գիտա-
կան արշավախմբեր են կազմակերպվում ու

բասում իրենց հրատարակության համար (ար-
ձանագրությունների հավաքման ու ուսում-
նասիրման գործում մեծ աշխատանք է կա-
տարել պատմական գիտությունների թեկ-
նածու Կ. Ղաֆադարյանը):

Կազմակերպվում են նաև ազգագրական
գիտարշավներ, որոնց ընթացքում դրի են
առնվում նոր նյութեր ու հավաքվում թան-
գարանային իրեր:

Այս ժամանակաշրջանում Պետական
կենտրոնական թանգարանը վերանվանվում
է կոչվում է «Կուլտուր-պատմական թան-
գարան»:

1935 թվին թանգարանը վերադաս օրդան-
ների որոշմամբ վերածվում է մի քանի ան-
ջատ միավորումների: Հնագիտական, ազ-
գագրական ու ճարտարապետական բաժին-



V—VII դարերի հուշարձաններին հատկացված դահլիճը

լայն մասշտաբի պեղումներ սկսվում Դվի-
նում, Կարմիր բլուրում, Շենգավիթում, Մու-
խաննաթ թափայում ու այլուր. ի հայտ են
բերվում նյութական կուլտուրայի բազմա-
թիվ նոր արժեքներ, ուսումնասիրվում ու
հավաքվում են վիժական արձանագրությու-
նները: Հավաքված արձանագրությունները
ամփոփված են 14 հատորից բաղկացած մի
հսկայածավալ ժողովածվում, որը պատ-

ների բազայի վրա հիմնվում է ներկայիս
«Պետական պատմական թանգարանը», գե-
ղարվեստական բաժինը վերածվում է «Կեր-
պարվեստի թանգարանի», իսկ գրական ար-
խիվային նյութերի հիման վրա կազմվում
է «Գրական թանգարանը»:

1939 թվին Պետական պատմական թանգա-
րանը մտցվում է ՍՍՍՐ Գիտությունների Ակա-
դեմիայի Հայկական ֆիլիալի սիստեմի մեջ:

Պետական պատմական թանգարանն ունի հինգ բաժին—հնագիտական, ազգագրական, դրամագիտական, ճարտարապետական և նոր ու նորագույն պատմություն: Թանգարանը Սովետական Միության մեջ առաջնակարգ տեղ է գրավում իր հնագույն մշակույթի (այսպես կոչված շելյան մշակույթի) տեսակետից, որի նմուշները հայտաբերվել են Արզնիի սարահարթում, և հղկված քարե գործիքների դարաշրջանից մետաղի դարին անցնելու, այսպես կոչված էնեոլիթյան շրջանի մշակույթի տեսակետից, որի նմուշները հայտաբերվել են Շենգավիթի պեղումների ժամանակ: Խոշոր արժեք են ներկայացնում Կարմիր բլուրի պեղումները ուրարտական մշակույթի ուսումնասիրման տեսակետից:


Հնագիտական բաժինն ընդգրկում է քարե դարից մինչև 18-րդ դարի նյութական կուտուրայի արժեքները: Դրամագիտական բաժնում կենտրոնացված

կարելի է տեսնել Տիգրան Մեծի ոսկյա ու արծաթյա դրամները՝ նրա դիմանկարով, Արտավազդի, Բագրատունիների, Ռուբինյանների ու այլոց դրամները:

Թանգարանի ազգագրական բաժինն ընդգրկում է 15-րդ դարուց մինչև մեր օրերը ընկնող ժամանակաշրջանի կենցաղային իրեր՝ զգեստներ, գործիքներ, ձեռագործներ, զարդեր ու պաշտամունքի առարկաներ:

Թանգարանը իր ունեցած արժեքների մշտական ցուցադրումից բացի կազմակերպել է նաև հոբելյանական ցուցահանդեսներ, ինչպես օրինակ Սասունցի Դավթի 1000-ամյակին և Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու 20 և 25-ամյակներին նվիրված ցուցահանդեսները:

Ահա մեր առաջն են Հայաստանի նախաբնիկների կյանքն ու պատմությունը լուսաբանող, վերջին տարիներս հողի տակից հանված, լուռ վկաները: Սևաթույր, պսպրուն



Թանգարանի ազգագրական բաժինը

են ոչ միայն հայկական, այլ և Հայաստանում երբևէ գործածված դրամներ, ինչպես օրինակ հին հունական, սելևկյան, հռոմեական, եգիպտական, պարթևական, սասանյան, բյուզանդական, արաբական, մոնղոլական, սելջուկյան և այլն: Հայկական դրամները զգալի տոկոս են կազմում. այստեղ

վանակներ (օբսիդիան) իր գոյությունը հաստատում է քարե դարի գոյությունը Հայաստանում: Դրանց մի մասը հայտաբերվել է Կոտայքում Արզնիի սարահարթում. սրանք հանդիսացել են հեռավոր ժամանակաշրջանի մարդու գործիքները: Այստեղ կարելի է տեսնել թե՛ ինչպես դարերի

ընթացքում մարդը կատարելագործել է իր գործիքները, անտաշ քարի գործիքների էպոխայից հղկված քարի գործիքների էպոխան թեկնոխելով: Այստեղ են հավաքված Արուգածի ստորոտում ու Կոտայքի էյլար գյուղում հայտաբերված այդ տիպի գործիքները՝ քարի մուրճեր, կացիններ, աղորիքներ, որոնց թիվը տարեց տարի աճում է թանգարանի և ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտի համատեղ կամ

կայացնում պաշտամունքի անոթները, որոնք հանվել են Նոր Բայազեդի, Սանահինի, Արզնիի, Դիլիջանի ու այլ վայրերի դամբարաններից և պատկանում են մեծ մասամբ առաջին հազարամյակին (մեր թ. ա.): Քարե կաղապարի գոյությունը Հայաստանում (Լենինական, Կարմիր բլուր) վկայում է արդյունագործական կյանքի մասին. առանձին հետաքրքրություն է ներկայացնում Շենգավիթում հայտաբերված կավե մեծ օջա-



Անիին հատկացված դահլիճը

առանձին կատարվող սխառնատիկ պեղումների շնորհիվ:

Նախնադարյան նյութական մշակույթը ներկայացնող սրահում մենք կարող ենք տեսնել նաև բրոնզե գործիքներն ու նրանց կաղապարները, խեցանոթներ, կավի օգտագործմանը հանգող փորձերի նմուշներ և այլն. այստեղ կան կենդանիների ու մարդկանց արձանիկներ, որոնք մեծ մասամբ կապված են նախնադարյան մարդու հավատալիքների հետ. կանացի փորձիկ արձանիկը վկայում է մատրիարխատության գոյության մասին. մեր թվականից առաջ հրրորդ հազարամյակում պատրաստված ոսկրե մանր գործիքները՝ ասեղները, հերոնները արժեքավոր նմուշներ են հանդիսանում. խեցանոթների մեջ մեծ հետաքրքրություն են ներ-

խը, որը ենթադրվում է որ գոյություն է ունեցել մեր թվարկությունից երկու հազար տարի առաջ: Այստեղ են գտնվում նաև Լենոլիթի շրջանից մեզ հասած ձիասարքերը, գործիքները (սակրեթ, մանգաղներ), լայն ու հետաքրքիր գոտիները, բոլորն էլ բրոնզից պատրաստված. այստեղ է պահվում և, Լալայանի կողմից Սևանա լճի ափին հայտաբերված «ցեղապետի սալի» մասերը, մի խիստ արժեքավոր գյուտ սալի պատմությունն ուսումնասիրելու համար: Ցեղապետի հողաբլուր դամբարանում ամփոփված են եղել նրա մարմինն ու իր սեփականությունը կազմող առարկաները. այդտեղ գտնվել են նաև այժյամի բրոնզյա մի սնամեջ արձանիկ (պաշտամունքի առարկա), երկմատնյա եղան (գենքի մաս), դաշույն-

ներ, ապարանջաններ և այլն:

Հնագույն շրջանի ընտանեկան կենցաղն ուսումնասիրելու համար հարուստ նյութ են մատակարարում բրոնզյա զարդեղենները՝ հսկայական ականջօղերը, ապարանջանները, մանյակները, վզի շղթաները, ուլունքները և այլն:

Խոշոր արժեք են ներկայացնում ուրարտական շրջանն ընդգրկող նմուշները. սրանք իրենց վրա կրում են ավելի բարձր կոլտուրայի ու կատարելագործման հետքերը: Ուրարտական շրջանից ալստեղ կան սեպագիր արձանագրությունների նմուշներ, որոնք մեծ խնամքով պահպանվում են: Այս բաժնի նմուշները մեծ մասամբ ձեռք են բերվել 1940 և 1946 թ. թ. Կարմիր բլուրի պեղումների ժամանակ. այստեղից հանվել են բրոնզյա վահաններ, կենցաղային բրոնզյա առարկաներ, զարդեր, ուլունքներ, կապարճի ու զենքի մասեր, կնիքների տեսակներ, ղռների վրա ամրացվող բրոնզյա օղակներ, որոնցից մեկի վրայի սեպագիր արձանագրության վկայությամբ քաղաքը ռազմի աստծո անունով Թեյշեբա էր կոչվում. ուշագրավ է ռազմի աստծո՝ Թեյշեբայի բրոնզյա արձանիկի գլուտը նույն տեղում: Նմանատիպ նմուշներ են հայտաբերվել նաև Խրտանոցի (Դիլիջանի շրջան) ուրարտական ժամանակաշրջանի դամբարաններից:

Նյութական կոլտուրայի այս մնացորդները մեծ աղերս ունեն հայ ժողովրդի կազմավորման շրջանի մշակույթի հետ: Ուրարտական շրջանի այդ արժեքավոր նմուշների մի մասը ցուցադրվում է, իսկ մյուս մասը պահվում է հատուկ պահանքներում:

Արտաշեսյան շրջանից մեզ են հասել Արտաշես առաջինի արամեերեն երկու արձանագրությունները՝ փոքրիկ քարերի վրա (Բ դար մ. թ. ա.), այս քարերը մեր ցուցասրահների զարդերից են: Այդ էպոխայից մեզ հասել են նաև հայկական դրամներ՝ Արտաշես առաջինի, Տիգրան Մեծի և Արտավազդի դիմանկարներով:

Թանգարանում կան մի շարք արձանագրություններ հղկված քարերի վրա լատիններեն ու հունարեն լեզուներով:

Հարուստ է և ճարտարապետական բաժինը. հռչակավոր Զվարթնոցի քանդակազարդ քարերը մի կողմից և տաղանդավոր ճարտարապետ Թ. Թորամանյանի ստեղծագործ ձեռքով պատրաստված տաճարի գծագրերը մյուս կողմից մեծ շուք են տալիս այն դահլիճին, ուր դրված են V—VII դարերի մեր ճարտարապետական կոթողների նմուշները:

Ահա և Անին. ցուցահանդեսի մեջ ծանոթրեն ու լուռ քաղմել է քաղաքի 20-րդ դարի սկզբների վիճակը պատկերող մակեաթ, որն անսահման հմայիչ է (պատրաստել է Գուրգեն Արևշատյանը): Մակեոթի շուրջը գտնվող ապակեծածկ փակ պահարաններում ցուցադրված են Անիից բերված հախճապակյա, մետաղյա անոթներ, ապակե սըրվակներ, արդ ու զարդի իրեր, զգեստի ու արվեստի նմուշներ, եկեղեցական սպասեղեններ և այլն:

Այստեղ կարելի է տեսնել նաև Դվինի պեղումների ժամանակ հայտաբերված իրերը, ինչպես և Հայաստանի զանազան վայրերից բերված խաչքարեր, քանդակազարդ բեկորներ, VII դարից մինչև XIII դարը ներառյալ:

Արժեքավոր նմուշներ են հանդիսանում Սևանի վանքի զեղեցիկ փայտյա քանդակազարդ երկու դռները (1552) ու խոյակները (871—4), Տաթևի հռչակավոր վանքի 13-րդ դարի դուռը, Անիից ու Նոր Նախիջևանից բերված գրքակալները և այլն:

Թանգարանի նոր ու նորագույն պատմության բաժնում պահվում է պատմական նյութերով հարուստ մի արխիվ, որը վերաբերում է հայ ժողովրդի վերջին տասնամյակների պատմությանը:

Չափազանց հարուստ է Թանգարանի ազգագրական բաժինը, ուր պահվում են զգեստներ, գորգեր, ձեռագործներ, զարդեր, զենքեր, եկեղեցական հին սպասեղեններ, պաշտամունքի առարկաներ, արհեստագործական ու երկրագործական դործիքներ, կերամիկայի նմուշներ և այլն. սրանց զգալի մասը մշտապես ցուցադրվում է: Ազգագրական այս նմուշների հավաքումն սկսվել է 1890-ական թվականների: ազգագրագետ Ե. Լալայանի կողմից: Այս ուղղությամբ մեծ աշխատանք է կատարել նաև հանգուցյալ պրոֆեսոր Ստ. Լիսիցյանը:

Թանգարանն ունի որակյալ գիտաշխատողների անձնակազմ, որը տարիների ընթացքում կարողացել է կազմել գիտության պահանջները բավարարող ճշգրիտ ցուցակներ: Այդ ցուցակներն ընդգրկում են Թանգարանում հավաքված նմուշների այսպես ասած «կենսագրությունները»: Մեծ գիտահետազոտական աշխատանքներ են ծավալել Թանգարանի գիտաշխատողները:

Շնորհիվ ՀՍՍՄ Գիտությունների Ակադեմիայի հոգացողության և Թանգարանի գիրքակալի Զաֆարյանի եռանդուն աշխատանքի Թանգարանն օրեցօր հարստանում է նոր ու արժեքավոր նմուշներով: